## ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՕՐԵՆՔԸ ՊԵՏՔ Է ՀԱՐԳՎԻ ԱՅՍ ԵՐԿՐՈՒՄ»

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 4 մարտի 2000թ.:**

Վեհափառ Հայրապետն ընդունեց «Եվրամիություն-Հարավային Կովկասի երկրներ» հարաբերությունների հարցերով Եվրախորհրդարանի զեկուցող Պեռ Գարտոնին:

Մտքերի փոխանակման ընթացքում Վեհափառ Հայրապետը հանգամանորեն կանգ առավ Հայաստան թափանցած աղանդների, պետական օրենքներն ու մարդու իրավունքները ոտնահարելու խնդիրներին: «Մեր Եկեղեցին բաց է ամենքի համար, սակայն օրենքը պետք է հարգվի այս երկրում, ինչպես Եվրոպայում է»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*

## ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ. «ՄԵՐ ԵՐԿՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԵՆ ԴԻՄԱԳՐԱՎՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ»

***Վեհափառ Հայրապետը հանդիպեց ԱՄՆ-ի և Գերմանիայի դեսպանների հետ***

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 16 մարտի 2000 թ.:**

Այսօր Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Մայքլ Լեմոնին:

«Վստահ եմ, որ մեր երկրի ղեկավարները մեծագույն պատասխանատվությամբ են դիմագրավում այս քաղաքական մարտահրավերը»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին այցելեց Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլկեր Ջայթցը՝ փիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետը և Գերմանիայի դեսպանն անդրադարձան Հայաստանի ներքին իրավիճակին և տարածաշրջանի խնդիրներին: Նրանք երկուստեք հաստատեցին, որ ամեն ինչ պետք է արվի կայունության պահպանման համար:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը հյուրերին ծանոթացրեց Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյա հոբելյանական ծրագրերին, դեսպանի խնդրանքով անդրադարձավ վերջերս Մոսկվա կատարած իր այցելությանը:

*ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ*